

Ճ Ա Շ Ա Կ

ՌԱՍԿԵՂԵՆ ԴՊՐՈՒԹԻՒՆ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Լ Ե Զ Ո Ւ Ի (1)

Կարեւոր խնդիր է սակայն թէ այս երկու ազգք անգիր մատենագրութեան, վիպասանութիւնն և թարգմանչութիւն, ուստի՞ առնուին զիւրեանց սնունդ, կամ, այլով բանիւ, զի՞նչ այն էր հասարակաց աղբիւր երկոցունց։ Չիք տարակոյս թէ էր ժողովրդական լեզուն հնագունին և ագնուագունին ի դաւառաց Հայոց Այրարատայ։ Եւ այս ուստի՞ յայտ իցէ. ունի՞մք օրինակ ինչ այնր ժողովրդական լեզուի։ Այո։ Գրեթէ ողջոյն մատեանն պատմութեան Բուզանդայ, մանաւանդ տեղիք ինչ ուր Բուզանդ տայ խօսել առանձինն մարդոց՝ ունին յայտնի նշանակա այնր ժամանակի ժողովրդական լեզուին։

Այսպէս խօսի Արշակ առ իշխանս Հայոց որ դարձան յարեւմտից առանց Ներսիսի, զոր Վաղէս առաքեալ էր յաքսորս. «Իսկ թագաւորն Արշակ, իբրեւ լուաւ և ետես զայս ամենայն, անշնորհ առնէր զտալիսն և զբերելիսն կարասոյն։ Ի ցառումն մեծապէս բարկութեամբ ընդ կայսերն նիւթեաց, եթէ զհարդ իշխեաց արգելուլ զայնալիսի այր զմեծ և զպատուական, զգլուխ և զվարդապետ, զառաջնորդ աշխարհի և զթագաւորութեան միոջ։ Քարինք բազումք, ասէ, ի վերայ կայսերն, և ձեր ի բերելդ. քարինք և մեր շատ կան ի թափել զատամուռն նորա ի տալն, և ձեր ի բերելդ. զմեր վատթարութիւնս յո՞ տարայց. արդ այդմ երախտեացդ ես դարձուցանեմ» (Բուզ. Դ. ԺԱ.)։

Վասակ սպարապետ Արշակայ խօսի առաջի Շապհոյ նո-

(1) Տես զթիւ Ժ.

վին պարզ և անպաճոյճ լեզուաւ . «Ասէ ցնա (ցվասակ) ար-
քայն Պարսից Շապուհ . Աղուէս , դու էիր խանդարիչ որ
այսչափ աշխատ արարեր զմեզ . դու ես այն որ կոտորեցեր
զՍրիս այսչափ ամա . և զի՞ գործես . զմահ աղուեսու սպա-
նից գբեղ : Իսկ Վասակ տուեալ պատասխանի ասէ . Այժմ քո
տեսեալ զիս անձամբս փոքրիկ , ոչ առեր զչափ մեծութեան
խոյ . զի ցայժմ ես քեզ առիւծ էի , և արդ աղուէս : Բայց
մինչ ես Վասակն էի , ես սկայ էի , մի ոտնս ի միոյ լերին
կայր , և միւս ոտնս իմ ի միոյ լերին կայր . յորժամ յաջ
ոտնս յենուի , զաջ լեառն ընդ գետին տանէի . յորժամ ի
ձախ ոտնն յենուի , զձախ լեառն ընդ գետին տանէի : Ա-
պա հարցանէր թագաւորն Պարսից Շապուհ և ասէ . Աղէ ,
տուր ինձ գիտել , ո՞վ են լերինքն այնոքիկ զորս դուն ընդ-
ունջ տանէիր : Եւ ասէ Վասակ . Լերինքն երկուք՝ մի դու
էիր , և մի թագաւորն Յունաց : Այն մինչ տուեալ էր ինձ
Աստուծոյ , զքեզ ընդ գետին տանէի և զթագաւորն Յու-
նաց , մինչեւ օրհնութիւն հօրն մերոյ Ներսիսի հանգուցեալ
էր ի վերայ մեր , և Աստուծոյ զմեզ ի ձեռանէ չէր թող-
եալ . մինչ զնորա բանն արարաք , և խրատ նորա եկաց առ
մեզ , գիտացաք տալ քեզ խրատ , մինչեւ մեզէն աջօք բա-
ցօք անկաք ի խորխորատ : Արդ , զինչ և կամիս արա» (Բուզ-
Դ. ԾԴ.) :

Յայտնի իսկ ժողովրդական են բանքն զորս դնէ Բու-
զանդ ի բերան Պապայ և սպարապետին նորա Մուշեղի , որ
ամբաստանեալ էր առ Պապայ վասն արձակելոյ նորա զՌու-
նայր արքայ Աղուանից : «Եւ Մուշեղ , սպարապետն Հայոց ,
սպաս արարեալ և դիպէր գնդին Աղուանից , և հասանէր
Ուռնայրի արքային Աղուանից ի փախստեանն , և նիզակա-
րնաւն ի կառափն մատուցեալ ծեծէր բազում , ասելով թէ
Այդմ շնորհս կալ զի այր թագաւոր ես , և թագ ունիս . ես
ոչ սպանից զայր թագաւոր , թէ կարի նեղ հասցէ ինձ : Եւ
ուրիշ հեծելով թոյլ ետ նմա փախչել , երթալ գնալ յաշխար-
հըն Աղուանից : . . . Ապա ամբաստան լինէին քսութեամբ առ
մեծ թագաւորին Պապայ զզօրավարէն Մուշեղէ , և ասէին թէ
Գիտեա , արքայ , զի մեծաւ նենգութեամբ է ընդ քեզ (Մու-

չեղ), և քեզ մահու սպասէ . զի զքո թշնամիսն համակ ար-
ձակէ , զի զբազումս բազում անգամ ի բուռն արկեալ՝ սո-
վոր է արձակել զթշնամիսն . զի զԱռնայր արքայ արձակ-
եալ՝ թոյլ ետ ապրել , ի բուռն արկեալ զհակառակորդս քո :
. . . Իսկ զօրավարն Մուշեղ տայր պատասխանի թագաւո-
րին Պապայ և ասէր՝ եթէ Զիմ զընկերսն զամենեսեան ես
կոտորեցի . իսկ որ թագս ունէին՝ նոքա իմ ընկերք չէին ,
այլ քո . եկեսցես , որպէս ես զիմն սպանի , դու զքոյսն .
այլ իմ յայր թագաւոր ոչ ձգեալ ձեռն երբեք որ թագ ու-
նի , և ոչ ձգեմ , և մի՛ այլ ձգել լիցի : Եթէ կամիս սպանա-
նել զիս , սպան . այլ ես , եթէ գայ ինձ ի ձեռն երբեք այր
թագաւոր , որպէս եկն բազում անգամ , ես ոչ սպանանեմ
զայր թագաւոր որ գամ մի թագ ունի , եթէ ոք իսկ զիս
սպանցէ» (Բուզ. Ե. Դ.) :

Զնոյն ժողովրդական լեզու է տեսանել ի հատուածս որ
զկնի :

«Շապուհ թագաւորն յորժամ յաշխարհն իշխանութեանն
իւրոյ հասանէր , զարմացեալ ընդ քաջութիւն գնդին կըռ-
ուոյն որ դիպեցաւ նմա , և ասէր եթէ Զարմացեալ եմ ես
զոր ինչ տեսի . զի իմ ի մանկութենէ իմմէ համակ ի ճակա-
տու և ի կռիւ մտեալ եմ , և բազում ամք են զի հասի ի
թագաւորութիւն , և առանց կռուոյ ամ չեմ լեալ . բայց իմ
ջերմ կռիւ զայս էր տեսեալ որ այս անգամս դիպեցաւ ինձ»
(Բուզ. Ե. Ե.) :

«Իբրեւ եղև յորժամ դարձաւ Շապուհ թագաւորն
Պարսից յերկիրն Ասորեստանի , և մեծ շնորհակալութիւն
առնէր ներքինւոյն Դրաստամատայն վաստակոցն , և ասէր
ցնա Շապուհ . Խնդրեա դու ինչ յինէն . զինչ և խնդրես-
ցես , տաց քեզ և ոչ արգելից : Եւ ասէ Դրաստամատ ցթա-
գաւորն . ինձ ի քէն այլ ինչ ոչ պիտի , բայց տուր ինձ հրա-
ման , զի երթայց տեսից զբնակ տէրն իմ , զԱրշակ արքայ
Հայոց : Եւ առ մի օր , իբրեւ ես երթայց առ նա , հրաման
տուր արձակել զնա ի կապանացն , և ես իշխեցից լուսնալ
զդլուխ նորա և օծանել , և ագուցանել նմա պատմութեան ,
և արկանել նմա բազմականս , և դնել առաջի նորա խորալի-

կըս , և տալ նմա գինի , և ուրախ առնել զնա արուեստա-
կանօքն մի օր ճիշդ : Եւ ասէ թագաւորն Շապուհ . Խիստ
են խնդրուածքդ զոր խնդրեցերդ . զի յաւուրց ժամանա-
կաց յորմէ թագաւորութիւնս Պարսից կանգեալէ , և բերդն
այն Անյուշ բերդ կոչեցեալէ , չիք ոք մարդ եղեալ ի մարդ-
կանէ որ իշխեցեալ է յիշեցուցանել թագաւորաց , յիշելով
զայլ մարդ որ յայնմ բերդի զոք եղեալ է , թող թէ զնա
զայր թագաւոր և զիմ ընկեր կապեալ եղեալ յայնմ բերդի ,
զհակառակորդն . քան մինչ աշխատ արարեր զմեզ՝ դու ա-
ւադիկ զանձն ի մահ եղիր և յիշեցուցեր զԱնյուշն , որ ոչ
էին լեալ երբեք օրէնք թագաւորութեանս Արեաց ի սկզբա-
նէ : Բայց զի վասն՝ քո մեծ վաստակք են առ իս , զոր ինչ
խնդրեցերն՝ երթ տուեալ լիցի քեզ . բայց քեզ արժան էր
զօգուտ քո անձինդ խնդրել , կամ աշխարհս կամ գաւառս
կամ գանձս : Բայց դու յորժամ զայդ խնդրեցեր , անցեալ
լիցիս զօրինօք Արեաց թագաւորութեանս . երթ , տուեալ
լիցի քեզ որ ինչ յինէնա խնդրեցեր փոխանակաց քոց : Եւ
ետ նմա փուշտիպան մի հաւատարիմ , և հրովարտակ՝ ար-
քունի մատանեաւ , զի գնացեալ երթիցէ նա ի բերդն յԱնդ-
մըշն , և զիարդ և կամք իցէ նորա , զոր օրինակ և խընդ-
րեացն՝ արասցէ կապելոյն Արշակայ որ յառաջ թագաւոր-
եալն էր ի Հայս : Եւ չոքաւ Դրաստամատն հանդերձ փշտի-
պանաւ և հրովարտակաւ արքունի յԱնուշ բերդն , և ե-
տես զտէրն բնակ . և արձակեաց զԱրշակ ի կապանացն եր-
կաթեաց , ի ձեռակապացն և յոտիցն երկաթոց և յանոց
պարանոցէն չղթայիցն սարեացն . և լուաց զգլուխ նորա , և
լոգացոյց զանձն նորա : Եւ ագոյց նմա պատմութեան ազնիւ ,
և էարկ նմա բազմակեանս , և բազմեցոյց զնա , և եդ առա-
ջի նորա ընթրիս ըստ օրինաց թագաւորաց , և եդ առաջի
նորա գինի որպէս օրէն էր թագաւորացն . սթափեաց զնա ,
և մխիթարեաց , և ուրախ առնէր զնա գուսանօք : Եւ ի
ժամ աղանդեր մատուցանելոյ եդին առաջի նորա միրգ ,
խնձոր և վարունգ և ամիճ , զի կերիցէ . և եդին դանակ
նմա , որպէս զի հատցէ և կերիցէ զիարդ և կամեսցի : Եւ
Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա . կայր յոտն և

մխիթարէր զնա: Իսկ յորժամ արբեցաւ (Արշակ), և գինին եկն զակամբ նորա, արբեցաւ հպարտացաւ և ասէ. Վայ ինձ Արշակայ. այս ես և այս և յայսմ չափու և այս անցք անցին ընդ իս: Եւ զայս ասացեալ՝ զգանալն զոր ունէր ի ձեռինն, որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել, եհար ի սրտի իւրում, և անդէն սատակեցաւ, և մեռաւ անդէն ի նմին ժամուն մինչդեռ կայր ի բազմականին: Իսկ յորժամ զայն ետես Պրաստամատն, յարձակեցաւ եհան ի նմանէ ըզնոյն դանակ, և եհար յիւրում կշտին. և անդէն մեռաւ և նա ի նմին ժամուն յայնմ» (Բուգ. Ե. Է.):

«Էյր երբեմն (եպիսկոպոսին Յոհաննու) գիպեալ ի ճանապարհի ուրեմն, զի նստէր նա ի գրաստու վերայ և գայր. եկ գիպեցաւ սմա օտար պատանի մի աշխարհական, հեծեալ ի ձի, սուսեր ընդ մէջ, թուր զգօտուոյ, աղեղնակապարճ զմիջովն, լուացեալ զձեռս իւր, օծեալ մարձեալ, վարսակեալ եղեալ ի գլուխ իւր, և օդիկ արկեալ զուսովք իւր, և գայր զճանապարհս իւր, թերեւս յաւազակութենէ: Իսկ ձին յորում հեծեալ՝ մեծ հասակաւ, և էր գունաւոր, գնացող. մինչ զի ի բացէ տեսանէր եպիսկոպոսն Յոհան զձին, մեծապէս զարմացեալ՝ ակնկառոյց լինէր: Ապա իբրեւ եկն մերձեցաւ հեծեալն մօտ ի նա անդր, ապա ըսպասեալ Յոհաննու՝ բուռն հարկանէր զերասանակաց ձիոյն և ասէր. Էջ դու վաղվաղակի ի ձիոյ այտի, զի բանք են ինձ ընդ քեզ: Ասէ այրն. Զի ոչ դու զիս գիտես, և ոչ ես ըզքեզ, զի՞նչ այն բանք իցեն զոր դու ընդ իս իցես խօսելոյ: Մանաւանդ զի այրն արեալ եւս գիպեցաւ, և շատ յամառեաց այրն իջանել ի ձիոյն: Ապա բռնադատեաց զնա Յոհան, իջոյց ի ձիոյ անտի, և առ տարաւ զնա մեկուսի ի ճանապարհէն: Եւ առնն խոնարհել հրամայէր և ասէր. Զերիցութեան ձեռն դնեմ ի վերայ քո: . . . Եւ ասէր. Երթ ի գիւղ քո, և լիջիր դու անդ երէց գեղջն ուստի ես: Եւ անգամ ոչ գիտէր զայրն թէ յորմէ գեղջէ իցէ: Ինքն Յոհան մատուցեալ բուռն հարկանէր զձիոյն և ասէր. Այս ինձ կօշիկք լիցին, փոխանակ զի երէց արարի զքեզ. . . : Ապա այրն թէ ոչ կամօք՝ աղէբողոն արկեալ գնայր ի տուն իւր,

և երթեալ մտանէր ի մէջ ընտանեաց իւրոց . ասէ ցկինն իւր և ցընտանիս . Արիք յաղօթս կամք : Եւ նոքա ասեն . Մոլիս դու , դէւ ուրեմն հարաւ ի քեզ : Իսկ նա ասէ . Արիք կամք յաղօթս , վասն զի երէց եմ : Իսկ նոքա վարմացեալ՝ մերթ շիկնէին , մերթ ծիծաղէին . մինչեւ բազում անգամ յամառեալք , ապա ուրեմն հաւանեցան կալ յաղօթս ընդ նմա : Ապա ասէ կինն ցայրն իւր . Ո՞չ դու երախայ էիր , և չէիր մկրտեալ : Ասէ այրն ցկինն իւր . Ապշեցոյց , չետ յիշեւ , և ոչ ես յիշեցի զայդ ասեւ ցնա . զիս երէց արար , և զձին սանձաւ թամբաւ առ և անց : Եւ ասեն ցայրն ընտանիքն իւր . Յարիցես անդրէն գնացես առ եպիսկոպոսն , և ասացես . Մկրտեալ չէի , զի՞ արարեր զիս երէց : Իսկ նորա յարուցեալ գնացեալ առ եպիսկոպոսն , ասէ ցնա . Ես միւկըրտեալ չէի , զի՞ արարեր զիս երէց : Եւ ասէ Յոհան . Սափորով միով ջուր բերէք : Եւ առեալ զջուրն էարկ զգլխով նորա և ասէ . Երթ , մկրտեցի զքեզ : Եւ արձակէր զայրն վաղվաղակի յիւրմէ » (Բուգ. 2. Ը.) :

Զսոյն ժողովրդական լեզուի զօրինակ ունիմք ուրեք և յերգս վիտասանաց : Արտաւազդ ասէ ցհայր իւր . « Մինչ դու գնացեր , և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար , ես ասեռակացս զրպէս թագաւորեմ » (Խոր. Բ. ԿԱ.) : Այսպիսի է և այն բան ռամկին զոր յիշէ Եզնիկ . « Այլ և վիճեալ եւս պընդին ի բանիցն վերայ : Մին ասէ՝ թէ ի մերում գիւղ ծովացով զկով գործեաց , և զգոչիւնն հանապազ մեք լսեմք ամենեքեան : Եւ միւսն ասէ . Զպայն իսկ իմ աջօք տեսեալ է » :

(Մատուցի յառաջ)

Ա. Մ. Գ.



Գ Ի Տ Ն Ա Կ Ա Ն

ԵՐԿՆԱԻՈՐ ԿԱՐՄՐՈՒԹԻՒՆՔ

ԶՆՆԵԱԼՔ Ի ՎԵՐՋ ԿՈՅՍ ԱՄԻՆ 1883 (*)

Յամին 1883, յերս կոյս ամսեանն Սեպտեմբերի, երեւոյթ մի նորանշան երեւէր ընդ ամենայն երեսս երկրագնտի մերոյ, մինչեւ այնպիսեաց իսկ որոց չէ ինչ փոյթ զիրաց որ չիցեն ի պէտս կենաց հասարակաց՝ միտ դնել նմա ընդ երկար. և արք Գիտութեան ի պայքար սաստիկ ընդ միմեանս մտանէին վասն երեւութին այնորիկ, որ տեւէր բաւէր ընդ ամիսս քանի մի: Յետ խոնարհելոյ Արեգական ի մուտս, և յառաջ քան զծագել նորա, ընդ մեծածիգ տարածս լուսաւորէին երկինք ի գոյն կարմրութեան, զոր օրինակ է տեսանել յորժամ խոնաւ իցէ օդ համատարած. այլ սաստիկ էր յայնժամ լուսաւորութիւն երկինց, որ իբրեւ զորդան կարմիր խտտեբանգ և պայծառ յոյժ երեւէին ընդ առաւօտս և ընդ երեկոյս:

Ըստ սովորութեան, յորժամ դէպ լիցի յայտնել նորօրինակ իմն երկնաւոր երեւութի, չպակասեն մեկնութիւնք, այսպէս եկեալ զհետ սովորութեանն՝ իւրաքանչիւր ոք ընտրէր մանաւանդ յայտ առնել և ասել ինչ կարծեօք քան խոստովան լինել զանհնարաւորութիւն ցուցանելոյ զստոյգ մեկնութիւն երեւութին: Քանզի ժամանակ լուսաւորութեանն գիւլէր յառուրս բորբոքման հրաբուխ լերինն ճալայ, որ փոփոխեաց զձեւ խմբի միոյ կղզեաց, բազումք ի գիտնոց, օդերեւութախօսք և փիւսկեանք, ի հրաբխական փոշեաց անտի համարեցան լինել զերեւոյթն նորատեսիլ: Այլ, որպէս առից ցուցանել յառաջակայսդ, այս կարծիք գիտնոց են անկալ և անկուլ ամենեւին, առանց իրիք հաւանութեան:

(*) Զայս հատած գիտնական քաղ հանաք ի Մանսօնութեանց Ժ. Ա. Հիւնի ուրումն գիտնոյ, որ յառանձինն մատենական, ի լոյս ածելոյ յամին 1885 ի Քոլմար, ճառէ զԵՐԿՆԱԻՈՐ ԿԱՐՄՐՈՒԹԵԱՆՑ երեւելոց ի վերջ կոյս ամին 1883: — Շնորհ ունիմք Տ. Հերոնիմոսի Բարսեղեան, որ ետ մեզ զմատենիկն զոր յիշեցար՝ հանել զնա ի հայ եւ դնել ի Հանդիսի մերում ի զրօտանս որոց չիցէ անհաճոյ լսել զմծաքանչն աստեղագիտութենէ:

Աի կարմրութեանն նշոյլք որ չողային մերթ անհնարին պայծառութեամբ՝ յետ Արեգական ի մուտս լինելոյ և յառաջ քան զելս նորա , յանդրէն դարձէ կամ ի ցոլանալոյ արեգակնային ճառագայթից էին , ի բնութենէ իրացն յայտ յանդիման երեւէր . զի ճառագայթք Արեգական արձակեալ ի վեր անդր ընդ նուրբ մասնկունս տարերց , հաստատունս կամ լոյծս , որ ծփին յերկնաբերձ բարձրութեան օդոյ , և դարձ ապա այսրէն արարեալ չողան այնպէս ի գոյն կարմրագոյն : Նոյն և մի էր , որպէս թուին , սկիզբն շառագոյն լուսաւորութեանն որ երեւէր յամին 1883 , և կարմրութեանց զոր է տեսանել մերթ յաւուրս գարնայնոյ և յաշնան ժամանակի , մանաւանդ յառաջ քան զանճրեւածս և յետ անճրեւայուզից , յորժամ իցէ պարզել և պայծառանալ երկնի . թէպէտ խտիր է մեծ յոյժ ընդ առաջինն և ընդ երկրորդ ազգ կարմրութեանց . զի որ ընդ երեկորին և ընդ արշալուրջս երեւիցի՝ խրատախաւ ինչ չափ ցոլանայ յեզերց երկնի ի վեր . այլ լուսաւորութիւնն կարմիր գորմէ բանք են՝ այլ ազգ էր հանգամանօք և երեւելի ի չորից ծագաց երկրի :

Մեկնութիւնք թէպէտ ոչ սակաւք , որպէս ասացի , ածան ի մէջ ի գիտնոց վասն նորասըանչ երեւութին . այլ ի կարծեաց համարի ունել զնոսա էր արժան և ի դէպ , և ոչ մեկնութիւնս ինչ հաշուել : Մարթի սակայն յերկուս դասակարգս զկարծիս գիտնոց զատանել : Ոմանց կարծիք էին զի ամպ մի փոշեղէն տիեզերական , որում հանդիպեալ էր Նրկիր ի գնացս իւր , տայր սկիզբն մեծասըանչ լուսաւորութեանն որ երեւէր յերկինս : Այլ բազմաց այն կարծիք էին՝ զի փոշիք կամ մասնիկունք ջրոյ ի խտութիւն փոխելոյ , որք յետս այսրէն դարձուցանէին զճառագայթս Արեգական՝ յետ ի մուտս լինելոյ նորա , էին արձակեալք ի սոսկալին Քրաքաթօայէ՝ սակաւիկ մի յառաջ քան զաներեւոյթ լինել սորա յանդուռնս համատարածն Ովկիանոս : Չեւ ի լուծումն ինչ պարապեալ՝ զիցուք առաջի հարցուած մի խնդրոյ , զի ի պատասխանելոյ անտի նորա լիցի մեզ գտանել ոտնկոխ ինչ ի վիճման աստ մերում :

(Մատուցի յառաջ)

ՀԱՒԱՏԱԼ ՍՆՈՏԵԱՅ (¹)

Ի զուր էր սակայն ջանալն եկեղեցւոյ հարց ունել զառաջս չարեացն , ցորչալի արմատն կայր հաստատուն , այն է հասարակաց հաւատք ոչ գոյութեան միայն , այլ և չնաշխարհիկ զօրութեան դիւաց : Բնական իմն էր խաբեբայից , յեցեալ յայն վարդապետութիւն , արկանել յօգուտ իւրեանց ի կիր զտգիտութիւն ռամկին . որ , ի բնէ մէտ ի թողուլ զբնականն և դիմել յի վեր քան զբնականս , եւս իմն աւելի զօրանայր այնու վարդապետութեամբ , վկայեալ և հաստատեալ մեծամեծ եկեղեցական և աշխարհական ճոխութեամբք , որպէս տեսցուք արդ :

Թողումք զպատմութիւն կախարդացն Նգիստացւոց , զորոց պատմի ի գիրս Նլից՝ թէ հանգոյնս նշանագործութեանցն Մովսիսի իշխեցին առնել . թողումք և զպատմութիւն վհուկ կնոջն որ եհան զՍամուէլ առ Սաւուղ : Զպատասխանի սոցա թողեալ մեկնչաց՝ յիշեցուք ինչ ինչ ի պատմութենէ , ուստի յայտ յանդիման երեւիցի թէ յինչ կարծիս եղէն առ քրիստոնէութեամբ ոչ արք աւագք միայն , այլ և եկեղեցին և տէրութիւնն գլխովին :

Ապողոնիոս Տիանացի , յառաջնում դարու անդ եկեղեցւոյ , համարեալ էր անուանի կախարդ սքանչելագործ . այլ զսմանէ չէ յայտ թէ զինչ կարծիս ունէր եկեղեցին , զի Ապողոնիոսի չեղեւ ի մօտոյ աղերս ընդ քրիստոնէութեան . այլ չէ մարթ զնոյն ասել և զՍիմոնէ մոգէ , որոյ դործ ընդ առաքեալս յայտնի է ի Գործոց առաքելոց , ուր վկայի իսկ թէ Սիմոն « էր մոգ , » այսինքն՝ կախարդ , « և ապշեցուցանէր զազգն Սամարացւոց . յոր հայէին ամենեքին ի փոքուէ մինչեւ ի մեծամեծս վասն բազում ժամանակաց մոգութեամբքն սալչեցուցանելոյ զնոսա » (Գործ. Ը. 9) : Արդարեւ նուիրական մատեանն այսպէս համառօտիւ անցեալ՝ չառնէ յայտ թէ զինչ կարծիս ունէր յայնժամ նորընծայ եկեղեցին զկախարդութեանց Սիմոնի , զՍամարացւոց միայն ասէ թէ « Ասէին . Սա է զօրութիւն Աստուծոյ որ կոչի մեծ . » թուի սակայն թէ

(¹) Տես զթիւ Ժ .

եկեղեցին եւս ընծայէր նմա դիւական իմն զօրութիւն , որում յարուցանէ հակառակ , նա գեր ի վերոյ իսկ , զսքանչեւագործութիւնս առաքելոց , մինչև նախանձ բերեալ Սիմոնի՝ հնարէր գնել արծաթոյ զշնորհն : Յայտնի է սակայն թէ զայն կարծիս ունէին զՍիմոնէ գոնեայ հարք երկոց առաջին դարուց եկեղեցւոյ , որպէս վէպն անուանեալ « Գործք Պետրոսի » , որպէս և թուղթք ինչ յանուն Կղեմայ Հռոմայեցւոց , յորս և պատմի իսկ վերանալ Սիմոնի յերկինս , և անկանել յերկիր աղօթիւք առաքելոյն , թող զայլ բազում նշանագործութիւնս , զորոց ասի թէ գործէր Սիմոն մինչև իսկ ի Հռոմ առաջի Ներոնի կայսեր : Զնոյն կարծիս ունէր և Կիւրեղ Երուսաղեմացի ի սկզբան չորրորդ դարու ի գիրսն անուանեալ « Կոչումն ընծայութեան » : « Ամենայն հերեսիութեանց գտակ , ասէ , Սիմոն կախարդ է : Սա եկն եհաս ի կողմանս Հռովմայեցւոց ի Հռոմ քաղաք , յետ առաքելոցն անարգելոյ զնա . և յայնպիսի մոլորութիւն խաբէութեան դարձոյց զքաղաքն Հռոմայեցւոց , մինչև Կղաւղիոս արքայ անդրի պատկեր կանգնէր նմա : Մինչդեռ յերկարէր տիրէր մոլորութիւնն , բարեաց ըժակիցքն , ամուլքն Պետրոս և Պաւղոս , գլխաւորք եկեղեցեաց , հասեալ , զպերճացեալ կարծեալ Աստուածն թալոցեալ անկեալ մեռեալ ցուցանէին : Զի խրոխտացեալ յանձն առեալ էր Սիմոնի յերկինս ելանել , և անդէն նոցունց առաջի ի կառս ելեալ դիւաց՝ ընդ ամպս ի վերայ օդոց չըջէր : Ապա ծունր եդին երանելի առաքեալքն Քրիստոսի , զհաւասարութեան զնետն աղօթիւք ի վեր արձակեցին , և անդէն յերկինց յերկիր գկախարդն կործանեցին : »

Ի թուղթսն որ յանուն Կղեմայ Հռոմայեցւոյ զորս յիշեցաք վերագոյնն , որպէս և առ Աթանասայ Սինէացւոյ , բազում ինչ պլանդակ պատմի զՍիմոնէ : « Սիմոն , ասեն , յանկարծ լինէր աներեւոյթ յորժամ և կամէր . չինէր մարդիկ յօդոյ , լերինք բացեալ տային նմա անցս , իշխէր անփնաս գնալ կամ նստել ի վերայ կայծականց հրոյ , չինէր անդրիս շնչաւորս և կազմածս որ չարժէին իւրովի . փոխէր զանձն ի կերպարանս ոյր ուրուք և կամէր , մինչև ի նոխազ , ի խոյ և յօձ . ի չըջնն ի փողոցս արկանէր զստուեր իւր ընդ բազում կողմանս , յան-

կարծ բուսուցանէր յերկրէ ծառս յաղթս երկնաբերձս, և յաւուր միում, ասեն, առաքեաց յարտ ուրուք մանգաղ մի, որ հնձեաց ինքնին այնչափ հասկս ցորենոյ որչափ արք երկու հազիւ կարէին հնձել:» Զիցէ՞ զարմանալի այսչափ գիւրահաւանութիւն առ հարս եկեղեցւոյ: Գիտե՛լ սլարտ է զի թուղթք կղեմայ, ոչ բունն միայն գրեալ առ Կորնթացիս, այլ և այնք որ օտարն և եկամուտ համարեալ են ի գիտնոց, էին ժամանակաւ ի մեծ պատուի յեկեղեցւոյ, գրեթէ հաւասար կաթողիկեայ թղթոց: Նկեսցուք այժմ յՆւրոպա:

(Մատուցի յառաջ)

Ա. Մ. Գ.



ԲԱՆ ԱՍԻՐԱԿԱՆ

Ի ԳՐՈՑ ՏԵԼԵՄԱՐԱՅ

Հատածդ որ ի Գրոց Տելեմաքայ՝ թարգմանեալ է ի ձեռն բանասիրի ուրումն, Տ. Ս. Գ. . . :

Ոչինչ թէպէտ զղիտաւորութենէն վասն որոյ հանեալն է զայս ի հայ՝ ասէ թարգմանիւն, այլ զիւրաւ մարթի առնուլ ի միտ՝ եթէ լռելեայն իմն տայ հրաւէր որում ընթեռնուն համեմատել զսա ընդ այլ երկոսին՝ թարգմանութիւն Տելեմաքայ, ածեալս ի հանդէս ժամանակօր յառաջ ի Մխիթարեան հարց Ս. Ղազարու:

Կալիփսոյ թախծեալ տրտմեալ էր յոյժ և ոչ ուստեք կարէր մխիթարութիւն անձին գտանել վասն մեկնելոյն ի կղզւոյն իւրմէ՝ Ողիսեայ: Առ վշտին սաստկութեան եղուկ զանձն համարէր, հեծէր, սգայր և հառաչէր թէ ընդէ՞ր անմահ իցեմ: Զձայն երգոց նորա ոչ եւս հնչեցուցանէր այրն յորում բնակէր, և ոչ Նիմիայքն որ սպաս նմա հարկանէին՝ ժտէին ինչ խօսել ընդ նմա: Շրջէր նա ստէպ առանձինն ընդ դաշտս զարդարեալս երփն երփն ծաղկամբք որովք մշտնջենաւոր իմն գարուն մեծապայծառ զարդարեալ սլաակէր զկղզին նորա. սակայն վայրքն այնոքիկ գեղեցիկք քաջ ի բաց հեռի զվիշտս նորա յամոքելոյ՝ յուշ արկանէին նմա զախուր յիշատակն Ողիսեայ որ այնչափ յաճախացոյնս պարսպէր առ նմա: Բազում անգամ կայր նա անշարժ առ ծո-

վեզերքն զոր թանայր արտասուօքն , և պղուցեալ յառեալ
ընդ այն կողմն եւեթ հայէր ուստի նաւն Ողիսեայ զալիս
ծովուն պատառեալ անհետ յաչաց լիեալ էր : Յանկարծօրէն
յանկարծուստ բեկորս ինչ ինչ նաւու խորտակելոյ ետես առ
ափամբն և բազմոցս թիավարաց ջախջախեալս , թիակս աստ
անդ ցիր և ցան ի վերայ աւազոյն , և ուղեակ մի և կայմ և
պարանս որ կոծեալ տատանէին ի ծովեզերին : Նոյն ժամայն
ետես և արս երկուս ի հեռաստանէ , յորոց մին ծեր էր
հինօրեայ , և միւսն ի ծաղիկ հասակի և նման յոյժ Ողիսեայ :
Զբարս քաղցունս յանձին բերէր նա զՈղիսեայ և զաներկիւղ
համարձակութիւն նորա և զգեղ հասակին և զսիգանս դնա-
լոյն : Անդէն ծանեաւ Դիւցակինն թէ Տեւեմաք էր նա , որդի
այնր դիւցազին : Թէպէտ և դիք քաջ ի բաց գլին զմարդիկ
ծածկագէտն գիտութեամբ , սակայն գիտել ոչ կարաց Վա-
լիփսոյ՝ թէ ո՞վ էր այրն այն պատկառելի որ դայր ընդ Տեւե-
մաքայ : Այն իմն բարք են դից , զի որ մեծագոյնքն են՝ թա-
քուցանեն զոր ինչ կամին՝ ի դից անտի որ խոնարհագոյնքն
են քան զնոսա . և Աթենաս որ ընդ կերպարանօք Մենտորի
չրջէր ընդ Տեւեմաքայ՝ յայտնել զանձն ոչ կամէր Վալիփ-
սեայ : Բայց ուրախ լինէր յոյժ ի միտս իւր Վալիփսոյ վասն
եղելոյ նաւարեկութեանն որ ածն և եղ ի կղզւոյ նորա զոր-
դին Ողիսեայ որ այնչափ նման հօրն էր : Յառաջ մատուցեալ
տակաւ և առանց յայտ ի դիմացն առնելոյ թէ ճանաչէր
զնա , Ուստի՞ իցէ քեզ , ասէ , ժտել յանդգնել գալ ի կղզի
այսր իմ : Դիտասցիր , ո՞վ պատանեակդ օտարախարհիկ , թէ
առանց պատժի ոք և անշլաս յերկիր իշխանութեան իմոյ
ոչ մտանէ : Սակայն գուն եղեալ ջանայր յոյժ Վալիփսոյ
թաքուցանել ընդ բանիւքս սպառնալեաց զուրախութիւն
սրտին որ յերեսսն ծաղկէր :

Ետ պատասխանի Տեւեմաք , ասէ . Ո՞վ դու , ո ոք և ի-
ցես , մահկանացու կամ ծնունդ դից (թէպէտ և չիցէ մարթ-
տեսանել զքեզ ումեք և առ դիս ոչ ունել զանձն քո) . մի՞թէ
ո՞չ դժայցես , ո՞չ արգահատիցես որդւոյ որ ի խնդիր ելեալ
կորուսելոյ հօր իւրոյ՝ կամակար դիմագրաւեալ է ի վիշտս մըր-
ջանաց ալեաց ծովու , և յետ տատանելոյ յամենայն հովմոց

և ի կոծանաց՝ ընդ քարաժայռս կղզւոյ քո ընդհարեալ և խոր-
տակեալ զնաւ իւր տեսանէ : — Ո՞վ է հայր քո որոյ ի խնդիր
եղեալ ես, ասէ Դիւցակինն : Պատասխանի տուեալ ասէ Տեղե-
մաք . Ողբիսեւս անուռն է նորա , մին ի թաղաւորաց անտի
որ ամս տասն ի նեղ արկեալ պաշարեալ զմեծանուն և զհո-
յակաս Քաղաքն Տրովացւոց՝ հարթ յատակ արարին : Անուա-
նի և երեւելի էր նա ընդ ամենայն աշխարհն Յունաց և
Ասիացւոց վասն քաջութեանցն ի մարտս պատերազմաց և
առաւել եւս վասն իմաստութեանն ի տալ խրատս շահա-
ւէտս : Այժմ արչաւանս եղեալ ընդ ծով համատարած՝ յա-
պառաթս անհնարինս , ի խութս և ի քարայրսահագինս կոծ-
եալ տատանեալ չրջի : Աղէ՛ , զի՞նչ ասեմ . մի՛թէ զառանցե-
լոյ բանս խօսիմ . թերեւս ընկղմեալ թաղեալ իսկ է յան-
դունդս ծովու : Թուի իմն թէ երկիր նորա հայրենի խոյս
տայցէ առաջի նորա : Պենելոպէ , կին նորա , և ես որ եմ
նորա որդի , չունիմք ինչ յոյս տեսանելոյ զնա միւսանգամ :
Ընդ նոյն վիշտս վտանգի , ընդ որ նայն , անցեալ և ես չըր-
ջիմ , ընթանամ այսր անդր զի գիտացից թէ ո՞ւր իցէ : Ար-
գահատեա՛ , գթա՛ ընդ տագնապս աղետից մերոց . և եթէ
գիտիցես , ո՞վ Դիւցակինդ , զոր ինչ հրամանք վճարեալ ի-
ցեն՝ ապրեցուցանելոյ կամ կորուսանելոյ վասն զՈղբիսեւս ,
ի վե՛ր հան և խելամուտ արա զորդի նորա զՏեղեմաք :

Կալիփսոյ խանդաղատեալ էր և զարմացեալ սքանչանայր
ընդ իմաստութիւնն և ընդ այնչափ ճարտարխօսութիւնս պա-
տանոյն . զաչս իւր յագեցուցանել ոչ կարէր ի նայելոյ ընդ
գեղ նորա և կայր անմուռնչ : Հուսկ յետոյ ուրեմն ասէ .
Ո՞վ Տեղեմաք , զոր ինչ դէպք թոյլ ետուն անցանել ընդ
հայրն քո , զայն ես ուսուցից քեզ գտակաւ . սակայն երկար
է պատմութիւնդ . այժմ քեզ ի դէպ ժամ է հանգչել և
զխոնջութիւնդ . թօթափել յանձնէ : Եկ ի վանս իմ , և աս-
պընջականեցից զքեզ իբրեւ զիմ որդի . եկ , գիւր արասցես
ինձ դու և սփոփանս մատուցես յառանձնութեան վայ-
րացս , և ես երանելի և երջանիկ արարից զքեզ , եթէ միայն
գիտիցես վայելել :

Տեղեմաք երթայր զհետ Դիւցակինջն որ սիգալով իմն

գնայր ի մէջ բազմութեան մանկամարդ Նիմիայից . բարձր էր նա բնաւ գլխով չափ ի վեր քան զնոսա , որպէս կաղնի բարձրաբերձ որ յանտառի ուրեք ոտս թանձրախիտս ի վեր ամբարձեալ ի մէջ ծառոց որ զնովաւ իցեն՝ չողայցէ : Յապուշ կրթեալ զարմանայր Տեւեմաք ընդ փայլուն դեղեցկութեան նորա , ընդ շքեղ ծիրանիս սլառմուճանին , ընդ հերսն վարսից վարկաւարազի իմն յետոյ կուսէ ամփոփեալս , ընդ բոցն սաստիկ որ յաջայն ելանէր և մանաւանդ ընդ քաղցրութիւն նորա որ զբուռն զայդ ազգմունս դաշն և մեղմագոյնս գործէր : Իսկ Մենտոր զաջս ի խոնարհ արկեալ զհետ երթայր Տեւեմաքայ ամենայն լուութեամբ : Ս. Գ.

ԳԵՂՈՆ ԱՆԱԿՐԷՈՆԵԱՆ

ԱՌ ՍՈՒՈԱԿ

Մինչ լիցի լու քաղցր ծայն քոյ
Ի լըռութեան շքեղ գիշերոյ ,
Ո՛վ մենութեան իմի պըւէտ
Թըռչուն , չգիտես , գամ ես քո զհետ .

Լըսելիք իմ , չես դու գիտակ ,
Լընեալ զբարբառ քո զանուշակ՝
Քաղցր ի նըւագ գեղգեղանաց
Բերկրին յերկար յանտառս ի բաց .

Գիտես դու ո՛չ զի առնել անց
Զիշխէ շունչ իմ ընդ մէջ շըրթանց ,
Եւ զի ոտն իմ հազիւ անխօս
Թէ կոխիցէ տերեւ ինչ գօս .

Հուսկ ո՛չ՝ զի ա՛յլ ոմն երգեցիկ ,
Ո՛յր քընարին դոյզն են գաղտնիք ,
Նախանձարեկ կըրկնել կամի
Զոր երգես դու զցայգ յանտառի : .

Այլ թէ լուսին խոնարհիցի
Զկողիւք լերանց լըսել ի քէն ,
Թաքչիս ոստոց դու յոստս անդէն
Ի տես նորին ճառագայթի : .

Եւ եթէ ջուր աղբերային ,
Ի վարել զխոյ իւր , դոյզն ըզխի՜ն ,
Անդ ընդ մամռով բառնայցէ ճիւղ ,
Քոյդ ամբոխի եւ կայ լըռին : .

Ո՛հ , սըրտայոյզ քո գեղգեղանք
Յոյժ առ վայրօքս են սըրբականք ,
Եւ այդ նըւագ քո հոգելից
Ազգումն իմն է առ Սուրբն երկնից .
Խորհրդական եւ այդ նըւագ
Ում դընեմք ունկն ես եւ հրեշտակք ,
Սուրբ գիշերոյ այդ հառաչանք՝
Գեղեցկածայն , դու ես , սոխակ : .

Ո՛հ , ըզքո ծայն յիմըն խառնեա ,
Նոյն լըսելիք ըզմեզ լըսեն .

Այլ քո մաղթանքդ այդ օղեղէն
Գընան յերկինս որ մնան նոցա : .

Այլ՝ արծազանգք են քընութեան
Որ սըրբութիւն է եւ սէր միայն ,
Մըրմունջ կիզիչ աստուածական ,
Երգ ինչ ծրփին զցայգս ամարան : .

Ի թախմուլից ծայնէ այտի ,
Որ ի խորոց հոգւոյ բըղխի ,
Ըզգամբ հոսել արտասուաց միշտ ,
Եւ կամ ունել ի սըրտի վիշտ : .

ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ

Հ Ա Յ Ե Ր Է Ն Լ Ե Ջ Ո Խ Ի

Ա

ԱՌ ԺԱՄԱՆԱԿ ՄԻ . արեն ղ . քիչ ժամանակ մի պարարէ գլխին քո : — * Ի բաց եկաց ի նմանէ առ ժամանակ մի : — * Թէպէտ և ոստովք առ ժամանակ մի ստկեսցէ , սակայն զաղլաղլիուն կանդաղեալն ի հողմոյ շարժեսցի :

ԱՌ ՅԱՊԱՅՔ . ըլլալիս քիչ . ասպարհ : * Յիշեա զառ յապայսն , և դադարեա ի թշնամութենէ : — * Արար զառ յապայսն , այսինքն զհանդերձեալսն :

ԱՌՆԵԼ Ի ՎԵՐԱՅ . իբրայ ասին՝ հասցնել : * Ես նախ երթայց լրտեսեցից , և զձեզ տարեալ արարից ի վերայ . զի այսպէս դիւրաւ լիցի ի բռնն արկանել :

ԱՌՆՈՒԼ ԶԻՆՔԵԱՄԲ . յանձնարար ըլլալ . իբրան ասին՝ ժողովարար . ի քիչաց (քիչան) խօսիլ : * Ուր և նոցա արարիչն ոչ գարչի զայնպիսի անուանս զինքեամբ առնուլ : — * Որպէս առաքելոյ առեալ զինքեամբ զերեսս ամենայն մարդկու թեան . . . :

ԱՌՆՈՒԼ ԱՏԱՄԱՆՅ . անասն ասին՝ բնիլ : * Յառուրսն յայնոսիկ մի՛ եւս ասիցեն՝ թէ հարքն ազոյս կերան , և որդւոց ատամունք առան : — * Ամենայն մարդ որ ուտիցէ զազոխն՝ նորին ատամունքն առցին :

ԱՌՆՈՒԼ ՄՐՏԻ . քիչ ասին . զհանել . անորթիլ : * Զմիսն (զազանաց) եթէ սիրտ ուրուք առնոյր , և ուտէր , ոչ վնասէր :

ԱՌՆՈՒԼ ԶԴՈՒՌՆ . քոտար խոսիլ : * Իբրեւ եղեւ միջամուտ սրահիցն , համարձակ զգրուանն առին զարտաքինս պարսպացն ընդ որ եմուտ Անտիոքոս : — * Ընդ առնուլ զրանն ընդ աղջամուղջս առաւօտին՝ ելին արքն սրտաքս :

ԱՌ , ԱՌԵՔ . եկա՛ւ , եկե՛ք . բե՛ր , բերե՛ք . հա՛յա : * Ա՛ռ արազոր ասեմքս քեզ : — * Առէ՛ք առնեմք զնա մեզ բարեկամ : — * Առէ՛ք առ իս կուժ մի նոր , և բերին առ նա : — * Առէ՛ք ինձ

չորս սափորս ջրոյ : — *Ա՛ռ չրջել ընդ աշխարհն : — *Առէ՛ք ,
և մեք գրեացուք :

ԱՍՊԱՏԱԿ ԱՌՆԵԼ, ԴՆԵԼ, ՍՓՈՒԵԼ, ՏԱԼ . աւերելու՝ Կողմ-
աւելու համար յիշար զբո՛ հանել : *Ասպատակ առնէին ի միջնաշ-
խարհն : — *Ասպատակ եւս ի Յոյնս արարին : — *Սկսանէր
Խոսրով Թագաւորն . . . հանել զգօրս Հոնաց , ասպատակ
դնել ի կողմանս Պարսից : — *Անտի ասպատակ դնէին ի քա-
ղաք մի Սկիւթացւոց : — *Ասպատակ սփռէր զկողմամբք Հա-
յաստան աշխարհին : — *Ասպատակ սփռէր ընդ աշխարհն ա-
մենայն : — *Յօժարէին այնուհետեւ ասպատակ տալ ի հեթա-
նոսան : — *Ասպատակ տուեալ առնուին զամենայն երկիրն :

ԱՏԱԿ ԼԻՆԵԼ . Կրօն ընել . Կրօն ըլլալ : *Չէր ատակ կըշ-
տամբել : — *Չեմք ատակ այնպիսի ինչ ճգունս յանձին ու-
նելոյ :

ԱՐԳԵԼ, ԱՌՆԵԼ, ԱՐԿԱՆԵԼ, ԼԻՆԵԼ, ՏԱԼ . արգել ըլլալ . Խա-
փանել : *Ոչ ոք է որ արգել առնէ : — *Արգել արաւոցեն եր-
թալոյն : — *Արգել արկցէ Տէր ի փոսոյ գետոյն : — *Արգել
արկ ճանապարհաց խոց : — *Արգել հայելոյ ի յստակութիւն
լուսոյն լինիցին : — *Փանգի ի շուրջ բնակելոց ազգացն ար-
գել լինէր : — *Արգել և զբաղումն տայր նոցա :

ՅԱՐԳԵԼ ԱՐԿԱՆԵԼ . շրո Դէն առնել՝ դաշարել . փակել : *Շը-
մաւոն հասանէր . . . և յարգել արկանէր զնոսա : — *Չեռն
ի գործ արկ ի պաշարումն և յարգել արկանել զնոսա :

ԱՐԳՈՅ ՕՐ . լուր օր . Բանի օր : *Դուռնն որ ի ներքնում
սրահին հայի ընդ արեւելս՝ եղիցի փակեալ զվեց աւուրսն
արգոյս , և յաւուրն շաբաթու բացցի :

ՅԱՐԴԻՒՆՍ ԱՅԵԼ . Իբո՛ ընել . Բլուի հանել . արբանտարել :
*Նա յառաջագոյն նկարեաց , սա յարդիւնս ած զնկատեալն :
ՋԱՐԵԻ ԿՐԵԼ . արբել : *Ոչ են արժանի զարեւ կրելոյ :

ՅԱՐԵԻՒ ԱՐԿԱՆԵԼ . Կեանք առնել . ապանել : *Եւ թէ ընդ-
դէմ դառնացէ , յարեւէ եւս արկանէ : — *Չոմն յընչից և
յարեւէ արկանիցեն : 3. Գ.

ԽՆԱՄԱԿԱԼՔ ՀԱՆԴԻՍԻՍ

3. ԳՈՒՐԳԻՆ Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ
